# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 24 | պոլո շապիկներ | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Վերնաշապիկ՝ պոլո, կարճաթև, ասեղնագործ, ամենօրյա (Վերնաշապիկ՝ պոլո, ասեղնագործ, ամենօրյա) Պոլո ձևի կարճաթև վերնաշապիկը իր կարվածքով հարմարավետ է ակտիվ գործողությունների համար: Պոլո շապիկը բաղկացած է առաջամասից, կոկետկայով թիկունքամասից, կարճ թևքերից և ծալովի օձիքից: Շապիկի կրծքամասի վերին հատվածը կոճկվում է 3 օղակ կոճակներով, ընդ որում վերին կոճակը՝ օձիքին: Շապիկը արտադրվում է երկու տեսակի գործվածքից, ընդ որում ուսամասերը և թիկունքային հատվածը՝ մինչև կոկետկան, մշակված է մուգ կանաչ գույնի առնվազն 220գ/մ2 գործվածքից՝ բամբակ, լաիկրա և այլն, իսկ մնացած մասերը՝ 100% նեյլոն մանրաթելերի, առնվազն 180գ/մ2 գործվածքից: Գունավորումը և ձևը ըստ ներկայացվող նմուշի: Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Թևքերի մանժետները մշակված է 2.5-2.7 սմ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | լայնության մանժետով, իսկ շապիկի ստորին հատվածը մշակված է 6.4-6.7 սմ լայնության մանժետով ։ Շապիկի ուսամասերում՝ դեպի առաջամաս աննշան թեքվածությամբ, մշակված են 4.7-4.9սմ լայնության և 15.5-16.0 սմ երկարության ախլակներ, որոնք կոճկվում են 13-14 մմ տրամագծով գլխիկավոր կոճակներով: Ախլակները պատրաստված են թիկունքի հատվածի գործվածքից: Ախլակների վրա անցկացվող պատա՝ կոչման տարբերանշաններով ուսադիրները ունեն 10.0սմ երկարություն և 5,0-5.2 սմ լայնություն, դարձերեսը հաստացված և ամրացված են սոսնձվող շերտով, հայկական առնամենտի զարդանախշերով են, ջակկարդ մեքենայի գործվածքով (ձևաչափը՝ ըստ Պատվիրատուի նմուշի), վրան նշված զինվորական կոչումներով: Թևքանշանները և կրծքանշանները պատրաստված են թիկունքի հատվածի գործվածքից, վրան մուգ կանաչ թելով ասեղնագործությամբ: Եզրերը մաքուր merrow մեքենայով եզրակարված են։ Աջ կրծքին «ՀՀ ԱԱԾ» գրվածքն է, ձախ թևքի վրա՝ ուսակարից 3.0 սմ դեպի ներքև ասեղնագործված (լցակարված ապլիկացիայի մեթոդով) 9.0×7.0 սմ կողմերով, սեպաձև, ՀՀ ԱԱԾ գունավոր զինանշանը: Շապիկի ձախ կողակարի եզրին կարի տակից կարվում է պիտակ (կամ պիտակներ): Պիտակին նշվում է չափս-հասակի, տեսականու անվանման, պայմանագրի կոդի, մատակարար և արտադրող կազմակերպության անվանման, արտադրման տարեթվի և խնամքի (գրվածքներով և սիմվոլներով) վերաբերյալ տեղեկատվությունը: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 50 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, պայմանագրի կոդը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 24 | | | |